Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99
U-30

Y

ՍԱՖԻ-ՍԱՏԻՐ

(ԱՐՏԱԿ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐԶԵԱՆՑ)

ԲՈՂԲՈՔ

Ի ԳՐՔՈՑԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ

1890

ՏՊԱՐԱՆԻ

Ա. Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ.

68

268

891.99
J-30

991

ՍԱՖԻ-ՍԱՏԻՐ

(ԱՐՏԱԿ ՏԷՐ-ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԶԵԱՆՑ)

891.99
U-30
68

ԲՈՂԲՈՔ

I ԳՐՔՈՑԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

884

Ա 16769

ԵՐԵՒԱՆ

1890

Ի ՏՊԱՐԱՆԻ
Ա. Ա. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

ԼԱՆԵԱՍՍՈ ԹԻՒՂԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՀՈՒՆԱՍԷԵՆՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀ
ԳՐԱԴԱՐԱՆ
Մարտունի-Պետ

Дозволено Цензурою Тифлисъ,
20 Декабря 1889 г.

ԳՐԱԴԱՐԱՆ
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
23888
ՍՏՈՒԳՎԱԾ է
1952 թ.

Эривань.
Типографія А. С. Гуламирянцъ.

ԲՈՂԲՈՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆՆԵՐ

ՄՈՒՍԱՑԻՆ.

Ահա՛ քո գնալը, ա՜խ դուրսն, Մուսայ,
Այլ հա՜ չէ՛ կամեմ ես երգել դուցա,
Այլ հա՜ չէ՛ կամեմ պիտուք հաստատանք՝
Սրտին խորտերեկոյ գեղանի ուրշագանք։

(Սբև. 23)



ԱԶԴ.

Մենք երկար լռելուց յետոյ, համարձակվումենք Բողբոջի I գրքոյկը-իբրև ճաշակ լոյս ընծայել, որպէս զի մեր անաչառ քննադատները և հասկացող հասարակութիւնը իւրեան կարծիքը յայտնի, որից յետոյ՝ եթէ արժան կը-համարուի,- լոյս կը տեսնեն սորա և միւս հինգ հատորներն։

ՍԱՖԻ-ՍԱՏԻՐ.

Հին-Նախիջևան։

ՕՐԻՈՐԴ *... *...ին.

Ա՛ԶՆԻՒ աղջիկ, դեռ քո կեանքը,
Նոր է փթթում՞ ու ծաղկում՞՝
Դեռ քո ազնիւ պարզ ժպիտը,
Շատ կը փայլի քո բերանում։

***

Դեռ շատ դարնան սիրուն վարդեր,
Քո մատներով կը քաղես՝
Շատ կը դանես քեզ սիրողներ,
Սա՛ շատերին կը փոքձես։

***

Շատ փոքձելուց յետ՝ վերջապէս,
Դու՛ կը ընտրես քեզ մի ղոյդ՝
Բայց ժամանակ է յայտնապէս,
Ասել՝ թէ ո՞վ էր քո ղոյդ։

***

Կոյս, ունէիր դու քեզ յարգող,
Սրիտասարդի անվախ սիրտ՝
Որ քեզ համար՝ քաջ և անդող,
Կը իջներ մինչ գետնի սիրտ։

***

Նորա կեանքը օձի թոյն է,
Բայց ոչ՝ դառն է նորանից,
Այդ թոյնը նա ընդունել է,
Ուր հարազատ . . . ից։

***

Աննման կոյս, յիշէ՛ նորան,
Յիշէ՛ նորա անունը՝
Քաղեր՝ դու վարդ, նոյնպէս շուշան,
Եւ պսակիր շիրիմը։—

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԵՐԲ այս աշխարհում թշուառ ընտանիք,
Մերկ, քաղցած, անտուն, շատ խեղճ է ապրում,
Նա այդ բոլորից չունի վախ, կարիք—
Յաւիտենական կեանքին է սպասում։

***

Երբ մի տկար մարդ իւր ամբողջ կեանքը
Ա՛խ ու վախերի մէջն է մաշում,
Դարձեալ նա ունի իւր սփոփանքը—
Յաւիտենական կեանքին է սպասում։

***

Երբ քնքոյշ ծնող.ք իւրեանց սիրելոյն՝
Սառ գերեզմանի մէջ են ամփոփում,
Նոքա անընդհատ արցունք չեն թափում—
Յաւիտենական կեանքին են սպասում։

***

Երբ մի անմեղ զոհ՝ դահճի սրի տակ,
Իւր վերջին աղօթքն է մրմնջում,
Դարձեալ նա ունի աւետող հրեշտակ—
Յաւիտենական կեանքն է սպասում։

* *
*

Երբ այս աշխարհում թշուառ մի էակ,
Իւրեան սփոփանք ոչինչ չէ գըտնում,
Դարձեալ նա ուրախ՝ դառն վշտի տակ—
Յաւիտենական կեանքն է սպասում։

* *
*

Երբ մահիճի տակ հոգեվարք հիւանդ՝
Կեանք և սիրելիք իւր ծօտ չէ գըտնում,
Դարձեալ նա ուրախ՝ դիմում է շուտ անդ—
Ուր յաւիտենական կեանքն է ժպտում։

* *
*

Ահա, թէ ինչպէս՝ սմեն դառն վայրկեան
Հաւատացեալին ուրախ է ժպտում։
Եւ բիւրնեղութիւնք՝ զերթ ցօղերդարնան՝
Քրիստոնեայ ազգից հեռու են փախչում։

Իսկ դուք՝ անհաւատք, դուք անաստուածներ,
Այս թշուառներին ի՞նչ մի բաներ՝
Կամ ի՞նչ մի լոյսի թոյլ շառաւիղներ,
Կարող է՞ք ցոյց տալ՝ որ վիշտք մոռանան...

ՀԵՂԻՆԱԿԻ ՎԻՇՏԸ.

Ա՛ՆՈՒՆԸԴ հեղինակ, ինքըդ աղտոտ տեղ,
Մի օր դիցուք՝ կուշտ, քաղցած քա՛նի հեղ,
Լինել բանաստեղծ շատ լաւ է, հոգի՛ս,
Եթէ քաղց, ծարաւ տանելու լինիս։

* *
*

Դիմիր Մուսային, որքան կարող ես,
Ցօրինէ երգեր, որքան որ կուզես.
Մի՞թէ ամբոխում կայ սիրտ և հոգի,
Պովէտ, դէթ տաջանքըդ դնահատի։

* *
*

Մի՞թէ չես յիշում դու կոյլ Միլտոնին,
Որ քաղցից ծախսից իւր գործն անգին,

Եւ այդ փողերով անմահ պովէտը՝
Հաց էլ չէր ճարում, մինչ կեանքի վերջը։

***

Մի թէ այս է կարգ, ասայ՝ ո՞վ Մուսայ,
Խղճուկ պովէտին գոնէ դու խղճայ.
Տանջուել անխնայ յօգուտ ամբոխի,
Իսկ փոխարէնը համբերել քաղցի...

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ.

Սիրասուն մտքերը ոչնչացնելով՝
Կուզէի զմայլելին մոռանալ.
Եւ, ա՜խ, *... փախչելով՝
Մտքերիս ազատութիւնն ստանալ։

***

Բայց աչիկները, որ ինձ գրաւեցին,
Ամեն մի լոպէ՝ կարծես՝ իմ դէմ են.
Նոքա, ո՜հ, արդէն հոգիս վերովեցին,
Խլելով անդորրութիւնս ինձմէն։

Խղճայ, *... խղճացիր դու ինձ,
Սրևակայիր դու իմ վշտերը,
Սրևակայիր՝ դիւթել ես դու ինձ....

ՐԱՖՖՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՕՏ

Ջինջ-երփնագեղ, պարզ եթերը՝
Զեփիւռի հետ գ'գվում է,
Եւ բիւրակնեայ արեգակը՝
Արփիից ինձ ժպտում է։

Անուշահոտ շատ ծաղիկներ՝
Գոհարի պէս շողում են,
Եւ սոխակի դայլայլիկներ՝
Վարդենիից լսվում են։

***

Քաղքը է այստեղ, բայց ինչքա՜ ես,
Աղի արցունք եմ թափում։
Կամ ի՞նչու իմ միտքը՝ պէս պէս՝
Տխուր արկածք է փնտռում։

***

Ես նայում եմ անմահ Ռաֆֆու,
Սևապատ գերեզմանին,
Որը այս տեղ՝ շատ դարերու՝
Ռաֆֆիին առաւ բաժին։

***

Ո՛հ, ինչ շուտէ,- մտածումեմ,—
Այս աշխարհում մարդ մեռնում։
Եւ ինչ շուտ է նա նորատ եմ
Մարդիկներից մեռացվում....



Եթէ լինէիր թանկագին զոհար՝
Ես պիտ՝ լինէի ոսկեհուռ քամար,
Որ քեզնով՝ միայն քեզնով հրճուէի,
Եւ քեզ սոկեգոյն համբոյր դրոշմէի։

***

Եթէ լինէիր սիրուն վարդենի՝
Սիրահար սոխակ ես պիտ՝ լինէի,
Որ ժպտող վարդիդ քովը նստելով՝
Նորան գ՝գուէի դայլայլիկներով։

***

Եթէ լինէիր որ և է դուսան՝
Քնար լինելս էր միակ դարման,

Որ քո փղոսկրեայ կուրծքին սխմուելով՝
Զայնս ձայնիդ հետ խառնէի սիրով,

* *
*

Եթէ լինէիր հոտաւէտ ծաղիկ՝
Ես պիտ՝ լինէի բիւրնղեայ ցօղիկ,
Որ քեզ եթերեան համբոյրները դրոշմեմ,
Քո սիրուն ծոցումդ հանգիստս առնեմ։

* *
*

Եթէ լինէիր հրատապ արեգակ՝
Ես պիտ՝ լինէի հանդարտիկ ծովակ,
Որ քեզ հանապազ կրծքումս կրելով,
Լուսափայլ այտերիդ պսակեմ համբոյրով։

* *
*

Իսկ եթէ մնաս այդպէս, ինչպէս կաս՝
Քո բարձր կուրծքիդ կըբանամ ես խաս.
Եւ քո սէգ իրան դողդող մատներով,
Պիտի միշտ փարեմ, խանդակաթ սիրով...

ՀԱՐԷՄՈՒՄ·

(ՆՈՒԷՐ ՐԱՖՖԻԻՆ)

Կէս գիշերը շուտ է անցել,
Ամբողջ աշխարհ քնած է.
Միակ լուսինն է մնացել,
Նա աշխարհիս հսկում է։

***

Հարէմի մէջ այդ միջոցին
Հայ օրիորդ է չոքած,
Նա դիմումէ իւր Աստուծին՝
Ձեռքերը երկինք տարածած։

***

Շատ չէ, ինչ այդ օրիորդին
Մի հայ իշխան է բերած,
Եւ յանձնելով մեծ փաշային
Լաւ ընծայ է տացած։

***

Այժմ անմեղ օրիորդը,
Դէպի Աստուած է դիմում,
Տարածել է իւր ձեռքերը՝
Եւ օգնիր ինձ է գոչում։

***

Նորա անմեղ շրթունքները,
Մեղմ աղօթք են մրմնջում,
Եւ արտասուաթոռ աչքերը
Դէպի երկինքն են նայում։

***

Ցանկարծ թռաւ օրիորդը,
Մի սուր բան է նա փընդռում,
Բայց 'ի զուր տեղ նա իրերը՝
Այս ու այն կողմն է ձգում։

***

Նա չը դուրս իւր ուզածը,
Եւ մի տխուր ահ գոչեց,
Մահ էր նորա ցանկացածը,
Որը նորան չը լսեց։

ՊՐԱԳԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Մարտիրոսա-Պետրոսեան
16769

Այդ ժամանակ էքնաղ կոյսը,
Աչքերը երկինք բարձրացրեց,
Եւ կիսաբաց շրթունքները՝
Այս խօսքերը բաց թողեց։—

**
*

«Տէր, մինչեւ երբ խեղճ Հայ կլինը,
«Այս վշտերը պիտ՝ տեսնէ,
«Եւ խեղճ, անմեղ օրիորդը՝
«Հարէմում պիտ՝ տանջուէ»։

**
*

Այդ միջոցին նոյն սենեակը,
Մտաւ անկոչ այցելուն՝
Եւ կուսական բարձր կուրծքը,
Սեղմեց մարդացած մի շուն...

**
*

Վաւաշտ փաշայի գրկում,
Հայուի է դրսնը լում,
Իսկ մեր անբաղդ Հայաստանում
Սա կատակ է համարվում։

ՄԱՅՐԻԿԻՍ·

Պաշտելի մայր, միշտ պիտ՝ յիշեմ
Քո անսահման սուրբ սէրը,
Եւ բիւր նուազ պիտ՝ արտասուեմ՝
Ցիշելով քո տանջանքը։

* * *

Ես պիտ՝ յիշեմ անցած օրերը,
Երբ նոր էի մեծանում,
Եւ պիտ՝ յիշեմ այն մորմոքներ՝
Որ քեզ էի պատճառում։

* * *

Լաւ յիշում եմ, երբ դեռ փոքրիկ,
Ես մի ա՜խ էի գոչում,
Իսկոյն քո սիրտ բիւրապատիկ,
Խոր վերքերով էր ծածկվում։

* * *

Քո բիւր տանջանք, քո պրտասունք,
Այլ ևս բաւ է՝ մոռացիր,
Հիմայ կեանքի քաղցր գարունք՝
Քեզ շատ մօտ է, հրճուիր։

* * *

Ես չեմ տանիլ երբ իմ մայրիս,
Արտասունքներդ պիտ՝ թափի.
Եւ իմ նորան տուած վէրքիս՝
Անցեալը պիտ՝ նորոգի։

* * *

Այն ժամանակ թող ես մեռնեմ,
Նոր սուգ և լաց նա տեսնի,
Քան որ պիտի ես հրճուեմ,
Իսկ նա սև օրեր տեսնի։

ԱՄԵՆԱՄԵԾ ՎԻՇՏԸՍ·

Ես թէպէտ դառն վշտեր շատ ունեմ,
Բայց նոցա յաղթել կարծեմ՝ կարող եմ,
Իսկ մի վիշտ ունիմ, որը անբոյժ է,
Արեան գոյներով աչքիս միշտ դէմ է։

* * *

Ոչինչ է կեանքս այն սէրի դիմաց,
Որ ես կորուսի, կորուսի անդարձ.
Որ գիշեր, ցերէկ, ամեն ժամ, բոպէ՝
Սա շրջանակով աչքիս միշտ դէմ է։

* * *

Ի՞նչեր շը տրի, ինչեր՝ աշխարհում,
Որ դէթ կարենամ լինել բաց կրծքում,
Որ դէթ կարենամ սևաթոյր զնչիներ՝
Շոյել, գուրգուրել, ցերթ սոխակ՝ վարդեր։

—

Որ դէթ կարենամ փղոսկրեայ կուրծքի,
Ծածկուած բնհեղը մատներով բանալ,
Ու նորա բազկաց, բազկաց հոլանի՝
Կիզուող երեսով փարուել, թանալ։

* *
*

Գոնէ յաջողուէր լինձ՝ նորա հասակ,
Գրկել, փայփայել՝ զերթ ոսկէ մանեակ,
Եւ նորա բարձր կուրծքին մօտեցած՝
Հաղիւ շարժուէի, ընչից արբեցած։

* *
*

Գոնէ կարենամ սև աչկունները,
Ամեն մի բոպէ համբուրել անվերջ,
Եւ նորա կամար՝ ադեղ ունքերը,
Աչքիս առաջև՝ զերթ կեանքս՝ ունենալ։

* *
*

Իսկ նորա այտեր, այտեր սպիտակ՝
Ձիշտ մարմարիոնի նման և գունակ,
Համբուրել անվերջ, համբոյրով քաղցրիկ՝
Եւ ապա մեռնել ուրախ, երջանիկ....

Բայց այս բոլորը ցնդան, զինչ ցողիկ՝
Ընդ դէմ հրատապ արևի շողքի,
Իսկ ես՝ անբաղդս՝ հառաչքներ մեղմիկ՝
Եւ արտասուախառն ա՜խ ժառանգեցի....

ՄՈՒՍԱՅԻՆ

Ահա՛ իմ քնար, առ դոլան, Մուսայ,
Այլ ևս չկամիմ ես երգել դոցա,
Այլ ևս չկամիմ տխուր հառաչանք,
Սրտիս խորքերից գրանի արձագանք։

* *
*

Ի՞նչ պիտ՝ հասկանայ այդ կոյր ամբոխը,
Երբ իւր սրտի մէջ չբկայ իմ ա՜խը.
Երբ որ ձիրք չունի նա գուշակելու,
Իսկ անցեալները նորից յիշելու։

* *
*

Դեռ արմատացած վերքերի խոցը,
Նա հեշտ է տանում, քան բալասանը.

Դեռ նորան օգնող սպեղանիքը,
Մի կողմ է ձգուած, չունի արժէքը։

* *
*

Նորա ի՞նչ փոյթն է, եթէ օգնողն,
Դառնութեամբ լքյուած կեանքը կէս կ'լենի,
Կամ նորան ի՞նչ փոյթ, եթէ մի պօէտ
Պիտ՝ թունաւորէ լուր կեանքն յաւէտ....

ԿՈՒՍԱԿԱՆ ԱՋԳԵՐ

Մի՞թէ այդ զոյգ սև աչքերը,
Ադամանդից սիրուն չեն.
Մի՞թէ դոցա կամարները՝
Ծիածանի նման չեն։

* *
*

Ո՜հ, դոցանից դուրս եկած կայծ,
Շատ ուժեղ է կայծակից.
Սիրահարի սրտում այդ կայծ՝
Բարձր է գոռում փայլակից։

Այդ դոհարեայ զոյգ աչքերը,
Մաղնիսից շուտ են ձգում,
Նոքա ոչ թէ սառ երկաթը,
Այլ տաք սիրտն են ճանկում։

***

Պարզ և յստակ, զերթ նուրբ եթեր,
Կոյս, քո աչքերդ են փայլում.
Իսկ, 'ի դէպս, զերթ բիւր շանթեր,
Մարդուս սիրտն են ծակում։

***

Զերթ երփնեռանդ հուր—սրեղակ,
Ճառագայթներ են սփռում,
Կամ հեզ, որպէս յստակ ծովակ,
Մարդուս ուշքն են խառվում։

***

Քո երկնագեղ արտևանունք,
Լաւ են փայլում սաթերից.
Եւ զերթ զեփիւռ, նոցա շփմունք,
Աչիկներդդ են փայփայում։

Ո՛չ սոխակը, ո՛չ նորա երգ,
Դոցա ձայնից անոյշ չի.
Եւ ո՛չ նոյն իսկ վարդ կարմրանկարկ
Դոցա նման կը ժպտի։

***

Մանուկ պոէտ, բաւական է,
Քնարըդ դու հեռու դիր.
Քո քնարը բաւական չէ,
Սիրտըդ նոյնպէս դու հրդեհի...

ԳՍՊՏԱՆ
Գրադարան Маркевича-Понина

ՑԱՆԿ

		Երես
1.	Աղդ	5
2.	Օրիորդ * * ին . . .	6
3.	Յաւիտենական կեանք . .	8
4.	Հեղինակի վիշտը . .	10
5.	Ընտանութիւն . . .	11
6.	Բաֆֆու գերեզմանի մօտ .	12
7.	Օրիորդ * ին . . .	14
8.	Հարէմում (նուէր Բաֆֆիին)	16
9.	Մայրիկիս , . .	19
10.	Ամենամեծ վիշտը . .	21
11.	Մուսային. . . .	23
12.	Կուսական աչքեր . .	24

ԱՍՏԱՂԱՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՈՒՆԴԱՍԻՆ Ս. ԴԱՎԱՆ


ԴԻՆՆ Է 25 ԿՈՊ.

[1ռ.]

Ն. ՍԻԳՍԱԾ Է 1971 Թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0058738

A I/16769